Ընդհանուր և արտաքին կապ...
8497 14.00
№ 10 SEP 2019 ժամ_
Դեղի կարգավիճակ_______
Նշումներ_______

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
# ՀՐԱՄԱՆ

«09» սեպտեմբեր 2019թ. N 2478 – Ա

## ՌՈՒՍԱՍՏԱՆԻ «ՆԻԺՖԱՐՄ ԲԸ, 603950 Ք. ՆԻԺՆԻ ՆՈՎԳՈՐՈԴ, ՍԱԼԳԱՆՍԿԱՅԱ Փ.7 ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ «ՎԻՏԱՊՐՈՍՏ ՖՈՐՏԵ (ՍԱՄՊՐՈՍՏ (ՇԱԳԱՆԱԿԱԳԵՂՁԻ ՉՈՐ ՀԱՆՈՒԿ)) ՄՈՄԻԿՆԵՐ ՈՒՂԻՂԱՂԻՔԱՅԻՆ 100ՄԳ/ՄԼ ԲԼԻՍՏԵՐՈՒՄ ԴԵՂԻ ՆՈՐ ՑՈՒՑՄԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշումը, համաձայն «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի փորձաքննության 30.08.2019 թվականի N 0103127919, բացասական եզրակացությունները՝ «Վիտապրոստ Ֆորտե (Սամպրոստ (շագանակագեղձի չոր հանուկ)) մոմիկներ ուղիղաղիքային 100մգ/մլ բլիստերում դեղի արդյունավետության և անվտանգության փորձաքննության արդյունքները, հիմք՝ փորձաքննության եզրակացություն N 18758 առ 30.08.2019թ. և ղեկավարվելով «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասի 1-ին կետի,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Մերժել Ռուսաստանի «Նիժֆարմ Բը, 603950 Ք. Նիժնի Նովգորոդ, Սալգանսկայա Փ.7 դեղագործական ընկերության արտադրության «Վիտապրոստ Ֆորտե (Սամպրոստ (շագանակագեղձի չոր հանուկ)) մոմիկներ ուղիղաղիքային 100մգ/մլ բլիստերում դեղի նոր ցուցման գրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի քարտուղարության պետ Զ. Դարբինյանին սույն հրամանը 3-օրյա ժամկետում պատշաճ ձևով պատվիրված փոստով՝ առաքել հայտատուին:

3. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Լ.Մելիքյանին՝ 3-օրյա ժամկետում ապահովել սույն հրամանի տրամադրումը հայտատուին:

10.09.19 ժ. 12⁰⁰

4. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի հայտատուին իրազեկելուն հաջորդող օրվանից:

5. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

09.09.2019

X

VERIFIED OCSP 09.09.2019 17:37.46 GMT+4

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360